Եւ իրաւ, երբ աչք ածեցի իմ շուրջը, տեսայ, որ նրա խուցի մէջ, բացի գրասեղանից եւ նրա հանդէպ դրած բազկաթոռից, որի վրայ նստած էր այդ կրօնաւորը, եւ բացի մահճակալից, որի վրայ տեղաւորուեցանք մենք այլեւս ուրիշ կարասիք չկային: Համեմատելով միւսների անշքութեան հետ, բազկաթոռը մի փառաւոր հակապատկեր էր ներկայացնում: Նա շինուած էր ծանր, ամուր փայտից եւ զարդարուած էր գեղեցիկ քանդակներով: Փայտի բնական մուգ գոյնը, հնութիւնից աւելի մթնանալով, խիստ վայելուչ տեսք էր տալիս նրան: Երբ կրօնաւորը նկատեց, որ ես հետաքրքրութեամբ նայում եմ բազկաթոռի վրայ, ժպտալով ասաց ինձ.

— Այս բազկաթոռը ես գտայ ամբարանոցում, ուր ձգել էին վանքի կոտրատուած երկրագործական անօթների մէջ: Հին եպիսկոպոսներից մէկի բազկաթոռն է. երեւի հեռու երկրներից ընծայ է ուղարկուած:

Այդ կրօնաւորի հագուստով երիտասարդը երեսունեւեւոեց տարեկան հազիւ կը լինէր, թէեւ նրա մօրուքը եւ գլխի խիտ մազերը ձիւնի պէս ճերմակել էին: Այդ ճերմակութեան միջից դուրս էր նայում մի գունաթափ, հիւանդոտ դէմք, խորն ընկած աչքերով, որոնք վառւում էին անբնական փայլով: Ինչ՞ն էր այնպէս վաղ ծերացրել նրան, ի՞նչն էր այնպէս մաշել ու տրորել նրան: Ոտքերի սրունքները չէին խոնարհւում նրան եւ, ջլատուած մարդու ոտքերի նման, դողդողում էին: Երեւում էր, որ երկար տարիներ այդ սրունքները կրել էին իրանց վրայ մի ծանրութիւն. երկաթի՜ ծանրութիւն... Նա խօսում էր, եւ երկարատեւ հազը իսկոյն ընդհատում էր նրան, մի խուլ եւ խռպոտ հազ, որ լսւում էր կուրծքի խորքից: Ինձ այնպէս էր թւում, որ կոտրած կարասի միջից էր լսւում այդ ձայնը: Ասլանը խորին ցաւակցութեամբ նայում էր նրա վրայ եւ չէր կարողանում իր տխրութիւնը ծածկել: Նայում էր բժշկի աչքով, նայում էր բարեկամի աչքով եւ դառն կերպով հոգոց էր հանում:

— Ես յոյս ունէի ձեզ վարդապետ տեսնել, — ասաց նա, դառնալով դէպի նոազած երիտասարդը:

— Կարծում էք, թէ հե՞շտ էր այդ, — հարցրեց նա փոքր-ինչ զայրացած, բայց դողդոջուն ձայնով: — Մեզ վարդապետ լինելու համար շատ բան է հարկաւոր սովորել... Մեզանից պահանջում են այն բոլորը, ինչ որ մի մոնթ կամ մի տիրացու՝ սկսեալ մանկութիւնից մինչեւ իր ձեռնադրուելը՝ սովորել է...

Հազը արգելեց նրան շարունակել. չարագուշակ հազը տեւեց մի քանի րոպէ. երբ փոքր-ինչ հանգստացաւ, շարունակեց.

— Այո՛, շատ բան է հարկաւոր սովորել... ե՛ւ սաղմոսներ պէտք է անգիր գիտենալ, ե՛ւ աղօթքներ պէտք է անգիր գիտենալ, ե՛ւ շարականներ անգիր